

# ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՕՐԳԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԲԱՅՈՒՆՆԵՐ Է ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ“ օրաթերթի

ԱՆՓԱՆՈՐԳԱԳՐՈՒՄ Է

1 ամիսը . . . . . 8 ու . . . . . 3 ամիսը . . . . . 21 ու.  
2 ամիսը . . . . . 15 ու . . . . . 4 ամիսը . . . . . 25 ու.

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ 50 ԿՈՊ.

Հասցեն՝ Тифлисъ, Головинскій просп. № 25. Tiflis, Rédaction du journal «Jogovrdi Dzain» Телефонъ 10—

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի կիրակի եւ օրն օրերից) առա-  
ւօտեան ժամը 9—2-ը, իսկ գրասենեակը նաեւ երեկ. ժ. 6—8:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ

Տ Ո Վ Ս Տ Ե Վ Ի Ն

Առաջին երեսի վրայ . . . . . 50 կոպ.

Վերջին երեսի վրայ . . . . . 30 կոպ.

ԸՆԴՈՒՆՆՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԵՐՆԵՐ  
ԳՈՒԼՊԱՆԵՐԻ,  
ԺԱԿԵՏՆԵՐԻ  
ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾՈՒԱԾՔՆԵՐԻ

Նոյն տեղը ծախում են  
— ՊԱՏՐԱՍՏԻ ԳՈՒԼՊԱՆԵՐ —  
Գրքի միայն առաւօտները ժամը  
11-ից 4-ը: Բարեառնակայա № 6,  
Վերին յարկ. 10—6

Թիֆլիս, 23 հոկտեմբերի  
ՀԻՆ ՆԱԽԱՊԱՀԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՒ  
ՆՈՐ ՈՒՂԻՆ

Մեր հասարակութեան մէջ տարածուած է այն համոզմունքը, որ միջազգային եղբայրութեան և խաղաղութեան գաղափարների միակ նեցուկն է յեղափոխական և դասակարգային սոցիալիզմը և նրա միջազգային կազմակերպութիւնը, այսպէս կոչուած Իստերնացիոնալը:

Այդ կարծիքը մի նախադրարմունք է, որ կարող է մեզ, փոքր ազգութիւնների համար ֆիասակար և փտանգուոր դառնալ այժմ, երբ համաշխարհային պատերազմը վերջանալու վրայ է, և զանազան երկիրներից լուրեր են գալիս, թէ նոր հաշտութեան արդիւնքը պիտի լինի ժողովուրդների կիզայի հիմնարկութիւնը: Մենք պատրաստ պիտի լինենք մեր մասնակցութիւնն ունենալ այդ ապագայ կիզայի մէջ, որ միացնելու է բոլոր ժողովուրդները. մենք պիտի պարզենք մեր վերաբերմունքը դէպի գալիք հաշտութիւնը և առաջի հերթին մեր և մեր հարեան ժողովուրդների ազգամիջեան փոխյարաբերութիւնների խնդիրը: Իսկ դրա համար մեր հասարակութիւնը նախ և առաջ պիտի թութափի իրենց այն բոլոր նախապաշարմունքները, որ ստեղծել է նրա մէջ յեղափոխական պահպանողականութիւնը: զլխաւորապէս սոցիալիստական և իստերնացիոնալիստական աւանդութիւնը:

զլխաւորը և հիմնականը հենց այն գաղափարն է, թէ իբր խաղաղութեան սկզբունքը յեղափոխական սոցիալիզմի մտնոպոլիան է:

Այդ գաղափարը մեր երկաւարը թիւնն իւրացրել է Ռուսաստանի համալսարանական քաղաքներում, ապրում լինելով այնտեղի յեղափոխական սոցիալիստական շարժումով: Վերադառնալով երկիր, մեր ինտելիգենտ երիտասարդները աշխատել են տարածել այստեղ ժողովրդական մաստաների մէջ, որ իբր թէ Անդրկովկասի ժողովուրդների միութիւնը կարող է իրագործուել միմիայն Իստերնացիոնալի բեցեպտով, այսինքն՝ որ այդ միութեան գաղափարը պիտի կիրառուի պրոլետարիատի գաղափարային կողմի միջոցին բուրժուազային դէմ, իսկ իր վերջնական մարմնացումը կը ստանայ ապագայ սոցիալիստական աշխարհում:

Այժմ, երբ մենք ապրել ենք և դեռ ապրում ենք Անդրկովկասի ժողովուրդների ազգամիջեան կռուի բոլոր սարսափները, այն կռուի, որ բռնկել է յեղափոխական բոլոր նուաճումներից յետոյ, հենց այն ժամանակ, երբ մեր ժողովուրդների ղեկավարութիւնը անցել է սոցիալիստական կառավարութիւնների ձեռքը, այժմ մենք գիտենք, թէ ինչ զին ունի այդ գաղափարային ինտերնացիոնալը: Մեր «գործիչները» միշտ քարոզել են, որ գաղափարային շահը միակ նպատակն է, որին պիտի հետևեն ժողովուրդները. այդ շահը միակ ոյժն է, որ կարող է կապել իրար հետ հարեան ժողովուրդները: Այժմ այդ գործիչները տեսնում են, թէ ինչ հետևանքներ է բերում գաղափարային անզուսպ կռուի քարոզը, որ գալիս է ունակորս անելու մասսաների ազգային արդիւնքները. նա սանձարձակ է անում ժողովրդի տարրական եսականութիւնը և գաղափարայինի հետ միասին զարդացնում և ուժեղացնում է

և տարր ցեղային բնազդները: Այնպէս որ միմիայն մասսան միաժամանակ կուտւմ է և իր իշխող գաղափարը և հարեան ժողովրդի դէմ:

Անդրկովկասի վերջ աւարուայ պատմութիւնը՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի իստերնացիոնալ արտայայտուելու արտաբանութիւնը: Այսինքն միմիայն ժամանակ միմիայն կռուների մէջ: Պարզ է ուրեմն, որ հասարակարգային պայքարը միջոց չէ ազգամիջեան փոխյարաբերութիւնները կանոնաւորելու և խաղաղութիւն հաստատելու համար: Այդ մեզ ազդեցիկ է արդէն համաշխարհային անեղ պատերազմը և Ռուսաստանի յեղափոխութիւնը:

Բայց այդ մեծ փոստերից մեր յեղափոխական ինտելիգենցիան չկարողացաւ պատշաճ եղբայրացութիւններ անել և շարունակում է մինչև այսօր էլ իր յեղափոխական պահպանողականութեան փոստ նախապաշարմունքներով ապրել: Մինչդեռ արեւմուտքում կատարուող մեծ դէպքերը գալիս են մեզ ստելու, որ երոսպական հասարակական մտքի այն հասանքները՝ որի վերջնական զեւ մուտւմ է մեր ինտերնացիոնալիստական կոչուած ինտելիգենցիան, այլ ևս ոչ մի ոյժ չունեն և ապրում են իրենց հոգեփարքը: Կիզայի և առկալար խաղաղութեան պայմանների ձեւակերպողը հանդիսանում են ոչ թէ այն սոցիալիստները, որ հաւատարիմ Իստերնացիոնալին, Յիմմերկուլի և կիստայի հակապետական և գաղափարային լոզունքներն են պաշտպանում, այլ մեր սոցիալիստներից «բուրժուական» կոչուած ազգային, պետական և ազատամիտ գործիչները, ինչպէս Վ. Վիլսոնը Ամերիկայում և Լյույր Ջորջը Անգլիայում: Եւ այդ մարդկանց յետևից են գնում այդ երկիրների խոշոր բանուորական կազմակերպութիւնները, որ բնագրկում են ազգութեան և պի-

տութեան սկզբունքները: Իսկ Գերմանիայից այդ ուժեղ խաղաղապիւրական շարժմանը պատրաստ են ընդառաջ գնալ պատասխանատու և չափաւոր տարրերը և նրանց թուին հենց այն սոցիալ-դեմոկրատիայի մեծամասնութիւնը, որ մինչև այժմ իր դրոշակները վրայ գրած էր կարլ Մարքսի գաղափարային և անպատասխանատու լոզունքները:

Այս բոլորը մենք պիտի խորմբանենք, և պարզ գիտակցելով համաշխարհային անցուղաւոր և հայ ժողովրդի ու նրա հարեանների դրութիւնը, մշակենք մեր ազգային պահանջները և մեր ու մեր դրացիների փոխյարաբերութիւնների ձեւակերպումը:

### ԿՈՒՒԸ ԲԱՆԳՈՒԹԵԱՆ ԴԵՄ

#### II

Կարեւորի, որամեր և մեր գների մասին

Անցեալ անգամ խօսելով սամամուտում նոր ստիպանների և շուկայի առնասարակ, եւ յիտաճեցի իմ զիտոպութիւնները միջերջերից մի քանիսի գների մասին:

Ձեռն արդէն մտնում է, իսկ քաղաքային պարենաւորման բաժանմունքը ոչինչ չէ արել ազգայնակութեան սուր կարիքները հոգալու համար, նոյն իսկ տեղական միջերջերի հաւաքուել հարցում:

Վերջինս կարտոֆիլի խնդիրը: Քիչ հաստատ յայտնի է, որ սրանից մի ամիս առաջ եկատերիւն-ֆելի և Վորսնցովիա դիւզիլի շրջանում կար հարիւր հարս փութ կարտոֆիլ, որը համաձայն էին փաճանել 9 ուրլով փութը: Նոյն մարդիկ, որոնք դեռ այն ժամանակ ուզում էին ասել, իբր հետ մըցելով դրա արժեքը այժմ հասցրել են իր տեղում 34 ուրլով: Եւ դեռ չեն էլ ուզում արտահանել, նպատակ ունենալով աւելի թանգ գնով փաճանել:

Տեղում կարտոֆիլի սակագինը նշանակուած է 34 ուրլով փութը: Բայց ով չգիտէ, որ հրապարակում այդ միջոցը չէ ձարում և շրջիլ մանրալաճանների օգնութեամբ բերուածը փաճանում է 50—75 ուրլով:

Նրանց արժեքը խելոյն էլ կընկնէր: Սակագինը ստանալով միջերջերի թանդութեան առաջն առնել անհարկն է. ոչնոր է աշխատել շուկայ հանել ապ նրանց: Եւ միայն այդ ձեով սակագինը կարող է բարեբար ներդրուելու ունենալ շուկայի գների վրայ:

Այժմ դառնանք պանրի հարցին: Նոր սակագինով, որը սամամուտում է հոկտեմբերի 1-ին, տեղական պանրի արժեքն է 7 ուրլով:

Սովորաբար, յայտնի է, որ պանրի պատրաստում են պանրեր և սամաուայ սկիզբներին: Այդ ժամանակամիջոցներում թիֆլիսում պանրը փաճանում էր փութը 70—100 ուրլով և շատ սակաւ 120 ուրլով:

Սակագին նշանակուած էր զըրւանքան 2 ու 50 կոպէկ:

Պանրալաճանների մեծ մասը իր ժամանակին արել էր գնումներ և դարակ պանրը տակաւներում այժմ ձախելու համար:

Յայտնի պատմաւորով ամառը պանրի գները սկսեցին շարժաւալու Բայց այժմ արդէն շուկայ է հանուած այն պանրը, որ դարեանը և անտաուայ սկիզբներին ձեռք է բերում եղել անտանմաւ էման գներով, քան այն ժամանակամիջոցի շուկայի գներն էին, մինչդեռ նոյն պանրը այսօր փաճանում է գրւանքան 8—10 ուրլով:

Մենք ընդհանուր կերպով անզուսպ է անտարակաւի արտոճակը, որ նրա խելոյն գրամի հարցում շրջանակների մէջ դեռեպուէլ չլինէ: Եւ այդ չէ որ մեզ զարժացնում է ու վրդովեցնում, այլ այժմ թէ սրջայի բոքի և անտանմաւ խընդիւրներում, թէ որքան թիֆլիս են միջերջերում մեր անտանմաւ կեանքի խնդիրներին ու կորիքներին այն մարդիկ, ոչինչ պարենաւորման գործը կենտրոնացրել են իրենց ձեռքում և թէ ինչպիսի անտակրութեան է մատուած մեր քաղաքային ամբողջ կեանքը:

Քաղաքային դոման պէտք է նեղութիւն կընք սեղեկանալու թէ ինչ հիմքեր ունել պարենաւորման բաժանմունքը 7 ուրլով սակագին նշանակելու այն պանրի համար, որը ձեռք է բերում սակագինը (2 ու 50 կոպ) արդամանքով և միջին սր սակագինը տակաւ ուրում ամուր յնարում միջերջերի տեղի ու աւելի զոցնելու համար: Այժմու անկրտոնի դոմայի պրակ մէջ պատանի է գնել մի







համարում է, որ իրաւունք ունի այդ քայլը անելու:

ԺԼՆԵՒ. — Եւէլցարական մասուլքը հարգում է, որ Յարսկոյէ Սերոյում հոկտեմբերի 15-ին մահապատժի է ենթարկուած նախկին մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայիչը:

ԲԵՐԼԻՆ. — Գերմանական բարձր հրամանատարութեան ներկայացուցիչը քաղաքական մի խորհրդակցութեան ժամանակ յայտնել է, որ Գերմանիան ստիպուած չէ աւարտել պատերազմը, այլ հարաւոր է պատում շարունակել պատերազմը և յաղթուած չը լինել այս խօսքիս զինուորական իմաստով: Այս յայտարարութիւնը մեծ ազդեցութիւն է ունեցել Վիլսոնի նոտային պատասխանի վրայ:

ԲԵՐԼԻՆ. — Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ղեկավարները կոչ են յայտարարել յեղափոխական այն շարժումներին դէմ, որոնք կարող են Գերմանիայում էլ ստեղծել բոլշևիզմ և առաջ բերել քաղաքացիական կռիւ:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

(Վ. Ն. Գ.)

ԲԵՐԼԻՆ, 21 հոկտ. — Ռազմական հարցադրութիւն: Պրեստանտի Զաւառ: Պահանջաւոր Ռուսներու թանակ: Պրանդիայում կատարել կարիւր էին լինում կիսի հատուածաւաճում և նրա առջում: Չունբրէն ներս խուժած թշնամին հակահարուածով տրոյց յետ մղուց: Պանիզելի երկու կողմերում թշնամին հաստատուեց կիսի արեւմտեան ասիին: Այն գործասերը, որոնք ներս էին խուժել գետի միւս ասիլ քաղաքից հարաւ մեծ մասամբ գերի ընկան: Պրանսիական մի հաւաքատեղի մնաց արեւելեան ասիին: Կորտուրիկից արեւելք թշնամի:

կուսակցութեան, այնքան է թուլացած քաղաքականապէս և տնտեսապէս, այնքան է զբաղուած ներքին մաքաւումներով ու կարիւրով, այնքան չզիտել իր մերձակերտ պապան, որ օտարութեամբ է մի առ ժամանակ մտաւոր իր Անդրկովկասեան բաբեկաններին, որոնց չէ կարող ոչնչով օգնել ոչ քաղաքական, ոչ արեւմտեանական և ոչ կուստուրական տեսակետից:

Ուստի սրանք, թարցնելով իրենց անարդուած սէրը և խորտակուած յոյսերը, պէտք է իրենց մասին մտածեն, մշակեն իրենց համար տանելի օրինակներ, գտնեն իրենց համար բարեկեաններ և համաձայնութեան գտն գարաւոր հարեւաններին հետ:

Ամեն մի ջանքաւորութեամբ մարդ, որ դիտուած է համաշխարհային իրերի գրութիւնը և մասնաւորապէս Անդրկովկասի իրականութիւնը՝ պարզ տեսնում է, որ բոլոր քաղաքական և ազգային խնդիրներին առաջիկայ լուծման ժամանակ Ռուսաստանը ահապէս դեր չէ կատարող կատարել:

Ճիշտ է, կազմալուծուած Ռուսաստանը շահագործող, նրան կտոր կտոր անող, նրա ծայրագագանները գրաւող Գերմանիան այժմ արեւմտաքաղաքական պարտութիւններ է կրում և փախուցում է այնպէս մի վայելուչ հաշտութիւն կնքելու ճիշտ է, Բոլշաւիստ արդէն դուրս է ձգուած կենտր. պետութիւնների պիտակցութիւնից. ճիշտ է և այն, որ թիւրքերն ցամաքի

մին պատեց անցաւ Գորիկի և Զվէզդէի յետը: Վիլսոնից արեւմուտք և հարաւ-արեւմուտք մենք կանգնեցրինք թշնամու յարձակումները: Եթէ դից հրահր մենք զիմադրեցինք թշնամու մեր ուղղադիրքի առջև: Տուր նէից հրահր թշնամին հասաւ Եւէլզին: Տուր նէից հարաւ մենք գործուած ենք անմիջական սազմական յարաբերութեան մէջ թշնամու հետ՝ Աէն-Սիման դէմ վրայ: Դէնէնից արեւելք, Պատարկից արեւելք և հրահր-արեւելք զանազան բարձունքների վրայ: Սոլէմի և Լէ-Կատոյի երկու կողմերում, ընդարձակելով իր յարձակումները Լէհասոյի և Ուալի միջև, թշնամին մեծ ոյժերով յարձակուած գործեց Սամմերդի և ֆերաւէնի միջև: Թշնամու յարձակումները ի դերս են հանուած մեր պաշտպանական կրակով Պատարկ հարթավայրից արեւմուտք գտնուած բարձունքների վրայ:

Սոլէմի երկու կողմերում մենք կանգնեցրինք մեր առաջուր դեմը պատող թշնամուն քաղաքից արեւելք և հարաւ-արեւելք: Ամերկայը և Ռոմէի մենք կորցրինք, բայց յետոյ նորից հակահարուածով յետ խելցինք: Լէ-Կատոյի երկու կողմերում, կատարել կարիւրեց յետոյ, ընդհանուր առմամբ մենք պահեցինք մեր դիրքերը: Սյուպիտով թշնամու՝ 20 կիլոմետր տարածութեան վրայ ձեռնարկած յառաջխաղացումը փշուռեց մեր հետեակ ուժերի և թիւանութիւնների կայուն ընդդիմադրութեան հանդիպելով: Թշնամին տիրեց շատ չնչին տարածութեան:

Գերմանական զանազան անգի բանակ. — Յեքթից հրահր թշնամու նորագուած յարձակումները կատարուեցին խնդու երկու կողմերում յետ են մղուած: Մենք հակադարձակումներով մարտից մերձ դուրս թշնամու ձեռքին մնացած գծերը և յետ մղեցինք ուժեղ հակադարձակումները: Վալիկից արեւելք թշնամին աշխարհում էր ընդարձակել իր յաջողութիւնները, որոնց հասել էր հոկտեմբերի 19-ին: Թշնամու մտադրութիւնները փշուռուեցին մեր հակադարձակումներից:

կողմից գրեթէ բաժանուած է Գերմանիայից և Սեւասթոպոլից և անդիւստրիայից ձեռքով դուրս է վանուած Ասորիքից և Միջագետքից:

Բայց այդ Գերմանիան ղեռ հաստատուած է կովկասում և Ուկրաինայում, դեռ դրուած ունի Սե ծովը և դեռ պաշտպանում է թիւրքերին, որ բնում է Անդրկովկասի բաւական մեծ մասը: Ուստի նայ ժողովուրդը, յանձին իր պատասխանատու ներկայացուցիչների, պարտուող է առանց սակայն խղիւղ իր բարոյական և կուլտուրական կապը Ռուսաստանի հետ, ապագայի յուսով — իր ներկայ իրական կարիքներն իրագործել իր սեփական միջոցներով. այսինքն 1) իր մերձակերտ գարաւոր հարեւանների հետ ստեղծել փոթադարձաբար ձեռնուող և յարմար modus vivendi, (խօսքս վրայացի և Ադրբեջանի թաթարների մասին է), որոնց սերբիտորիայի վրայ ապրում են այնքան բազմաթիւ անպաշտպան հայեր: 2) բայց է անկեղծ կերպով բանակցել թիւրքերին հետ, որպէսզի նա մարքէ և ազատէ Հայաստանի Հանրապետութիւնը թիւրքական զօրքերից և ապահովէ թիւրքապետական հայերի համար բնագոյն կեանք նրա սահմաններում և քաղաքական հասարակութիւն մասնկողական քաղաքացիների հետ:

Այսպէս ուրեմն նայ ժողովուրդի իրական շահերի և քաղաքական ձգտումների կենտրոնը ներկայումս գտնուած է ոչ թէ Կովկասեան յեռ-

ԶՐՈՅՑ ԴՐ. ՑՈՒԳՄԱՅԵՐԻ ՇԵՏ

Վ. Պոլիսը  
Մենք տեղեկութիւն չունենք Կ. Պոլսի մասին: Դարդանից նորից ամբարցուած է և պաշտպանուած է գերմ. և աւստր. զօրքերով: Եթէ մտած լինեն Դարդանի, մեր դրութիւնը շատ կը ծանրանայ:

Սիրիա  
Սիրիական ֆրոնտում կազմակերպի են գերմ. զօրք Լիման ֆոն Սանդերսի ղեկավարութեամբ:

Անդրկասցիները գրաւել են Բաւարեկ (որ գտնուած է 150 կիլոմետր Հալեպից):

Գերմանիան և Վիլսոնը

Վիլսոնի երկրորդ նոտան պահանջում էր Գերմանիայից վերջ տալ գերմ. զաժանութիւններին ծովի և ցամաքի վրայ: Գերմանիան պատասխանել է, որ խոստանում է այլևս մարտաւար նաւեր չխորտակել: ցամաքի վրայ քաղաքները ոչ թէ ինքն է աւերուած այլ դաշնակիցների թնդանութիւնները. այլ ստուգելու համար գերմ. առաջարկութեամբ կազմուել է մի կոմիտայ Բրեւսելում գտնուող չէզոք պետութիւնների ներկայացուցիչներից որոնք արդէն մեկնել են քննելու:

Վրաստանն ու Հայաստանը

Եթէ վրաց սահմաններին հայկական զօրքերից վաճառք լինի, գերմանացիները օգնելու են վրաց զօրքերին և պաշտպանելու են վրաց սահմանները: Բայց ես կարծում եմ միջադէպը արդէն վերացել է:

Ուկրաինան և Ռուսաստանը

Հնարաւոր է Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ստեղծելու Գերմ. ընկելու են չէզոք իրք, այդ պատճառով էլ զօրքերը ազդեցին ուստ սահմանից 10 կիլոմետր:

Նամակներ Սիւրիայի

Պարբէջանի կատարել է այլ բողոքագիր է ուղարկ այդ անհամահներ ենք ուղարկ խմբակցու առանց թիւրք. ցեղն ապրի, այլ պատճառով այսօրուստի զօրքերնում ենք նամակներ ընդունել Բագուի համար: Նամակ օրը պէտք է տանել ազրբեջանական ներկայացուցիչի մօտ: Մինչև լողորդագիր ստանալը ամսին 22-ին գնաց վերջին ստերմանդակը: 3. 0.

ներից հրահր, ոչ Մոսկուայում, ոչ Սամարայում, ոչ Նովոչերկասկում և ոչ նոյն իսկ Երաստրինոպոլում, այլ հենց Թիֆլիսում, և մասնաւոր Կ. Պոլսում:

Այս կենտրոնների և նրանց աւերի վրայ պէտք է դարձնեն իրենց ուղղադիրքները հայ ժողովրդի պատասխանատու ղեկավարները:

Անդրկովկասի գրութեան աւերի հետ նրանք պէտք է գործ ունենան և իրենց հաշիւները յարաբերեն:

Ոչ մենք, ուստ անդրկովկասցիներ, և ոչ Ռուսաստանը իրաւունք չենք ունենայ նրանց մեղադրելու, մասնաւոր թէ գաւազանութեան մասին խօսք տեսնու: Ընդհակառակը մենք միայն գոհունակութեամբ ու գործանքով պէտք է յիշենք միշտ, թէ որ պիտի հաստատուածութեամբ նրանք հաստատու էին Ռուսաստանին, որքան երկար նրանք հետեւում էին ուսական օրինակաւորի և ինչպէս մինչև այսօր էլ նրանք հաւատում են Ռուսաստանի ապագայ վերածնութեան — նոյն իսկ այժմ, երբ Ռուսաստանը բոլշևիզմի ձեռքով վերածուած է աշխարհագրական տերմինի:

Եւ Ռուսաստանը պէտք է յիշէ այս իր վերածնութեան և յաղթութեան ժամին, որ այնքան էլ հեռու չէ:

Մ. Եսաբեքով

ԳԵՐՄ. ՄԻՍԻԱՅԻՑ

Գերմանական ղեկավար Պոլսում հետադրով հաղորդել է գերմանական պատգամաւորին կովկասում, որ կառավարութեան փոփոխութիւնը անցել է առանց միջնադէպի:

Յրակիրայի սահմաններում բոլորովին խաղաղ է, առաջխաղացումներ ղեկի տակական տերրիտորիան թշնամու կողմից առայժմ չեն նկատուած:

Անդրկասցիք Սիրիայում Բաւարեկի մօտ (150 կիլ հարաւ Ալեպպից) աղբակ ու պահէլ են իրենց պիտուր ուժերը:

Խամաի ուղղութեամբ առաջխաղացում է տեղի ունեցել, մասնակցել է փոքրիկ քանակութեամբ կառավարիչ:

Պատուը մինչև օրս գտնուած է սահմանների ձեռքում:

Բոլոր այն լուրերը, որ իրր տարեկ կառավարութիւնը մասաւորել է կնքել անջատ հաշտութիւն, սխալ է և ոչնչի վրայ հիմնուած չէ:

ՌՈՒՍԱՍԱՆ

Հացի փայլ

Միմֆերոզուում հացի փայլը (բաքէ) պակասացրած է մինչև երեք քառորդ ֆունտ, որը անբուականութիւն է յարուցել ազգայնականութեան մէջ:

Նաբախումներ

Թեոդոսիայի և Կերչի միջև զբաղուող Սարաթին գրեթէ գտնուած է նաւթի աղբիւր. կառավարութիւնը արդէն ձեռնամուխ է եղել հետազոտութեան:

Ալեկսանդր Տեխովի

Այն լուրերը, որոնք հաղորդում էին թէ խորհուրդների մինխորութեան նախկին նախագահ Պէթք. Տեխովը գնալիս հարաւում է, ոչ մի հիմք չունեն: Նա ողջ է և մօտ օրերս սպասուած են նրան Կիւտում: Սպանուած է նրա կողայր Վլադիմիրը:

Նախկին կառավարութեան անկամները

Նովորոսիյսկում ժողովուել են ժամանակաւոր կառավարութեան նախկին նախարարները՝ Գրեկերգ, Մալեանովիչ և Նիկիտին:

Կրասովսկու զարք

Կիևի խուզարկու բաժանմունքի նախկին պետի՝ Կրասովսկու գործը լուծուելու է հոկտեմբերի վերջերին:

Աղօթի գեանաթի համար

Կիևի. — Մոֆիսյիլի և միւս եկեղեցիներում նորից կարգացուած է «Спаси Господи» աղօթքը, բայց փոխանակ «Благовѣрному Императору нашему» երգում է «Благовѣрному гетману нашему Павлу»:

Զօրակոչ Սիրիում

Սիրիերի կառավարութիւնը զօրակոչ է յայտարարել՝ սկսած 1902 թ. մինչև 1919 թ.:

Գերմանիայի Կովկասում

Հոկտեմբերի սկզբներին հետեակ զօրքի հակայական ոյժերի միջոցով անցել են Յանտուկիից և յարձակուել Կիւսալովուղ ու Բարդուստանովայա ուղղութեամբ:

Կամաուքական զօրքի հակառակ յարձակումից տապալուած՝ մեծամասնականները դիմել են փախուստի: Կամաուքական զօրքը գրաւել է Կորովսկուսկայա, որից թշնամին հետացել է ղեկի Կուրուսկա:

Ա Դ Ր Բ Է Ջ Ա Ն

ԿեԱՆԲԸ ԲԱԳԻՈՒՄ

Բաղուից կեղոնները պատմում են թէ, թէ քաղաքում կեանքը նորմալ ընթացք է ստացել, բայց այն

նուսանկային շատ անարդարութիւններ են տեսել ոչ միայն իրենց մեղաւոր ու անուղիղ մտքով, այլ և հանդիսանում է: Կեղոնի հարկի մաս թիֆլիսի դեմաքի հետ գտնուած թիւրքի է. շուկայում ոչինչ չկայ: Թէև գործարարներ թիւն էլ զգալիորէն պակասել է:

Նրա տակով շատ մարդիկ կան, որոնք պատրաստ են թողնել Բագու և անցնել ուրիշ քաղաքներ, բայց կառավարութիւնը արգելում է հայերին քաղաքից հեռանալ:

Իսկ այն հայերը, որոնք դիմում են գաւազանի միջոցներ և ճանապարհուած ղեկի թիֆլիս, հասնում են մինչև Եւրախ, որ և գտնում են իրենց մասը:

Այս վերջին լուրը հաստատում է նաև մի վրացի, որ իսկապէս Բագուից կեղոչ հայերին վերադիշուլ կայաւանում անխոր սպանում են:

Տ Ա Ճ Ի Կ Ն Ե Ր Ը

Հաւասար աղբիւրներից հարուգում են, որ տանի կառավարութիւնը ետանգուն կերպով էրգրում և մօտակայ գրեղներ է արտահանում ինչ որ կարողանում է ձեռք բերել Ախալցխայի և Ախալքալաքի գաւառներում:

Վ Ր Ա Ս Ս Ա Ն

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՒՎԱԼՐՈՒԹԵԱՆ ԿԵՑ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՐՄԱՍԱՐԻՆ

Բագուի կոտորածի առիթով Հայաստանի կառավարութեան տեղիս ղեկանադիւստեան ներկայացուցիչ Մ. Զամուլանի ներկայացրած բողոքի վրայ Աւսրալտուականի ներկայացուցիչ Մ. Զաֆարովը հետեակ զբողոքներն է ուղարկել:

Չեր հոկտ. 16-ի № 1249 նոտայի առիթով պատիւ ունեւ հաղորդել հետեակը:

Իմ կառավարութիւնն իր գործունէութեան ամբողջ ընթացքում թափել է և շարունակում է մեծ ջանք թափել, որպէսզի հասնի կառարեալ հաշտութեան դարերով կողք կողքի ապրող երկու ազգերի միջև: Պատշիկ ներթիւն այդ տեսակետից նա աշխատել է հանգստացնել այն զբողոքումը, որ առայ էր եկել Ազրբեջանի մասնկողական աղաքանակութեան մէջ այս տարուայ մարտ ամսին տեղի ունեցած ղեկաբերի պատճառով, երբ հայերը՝ բոլշևիզմների անուան տակ, կոտորեցին մասնկողականներին Բագուում ու Շամախում և երբ գոհերի թիւր պաշտանապէս ստուգուած տուեաների համաձայն 10 հազար մարդուց անց էր, կամ երբ հենց այս տարուայ դարնանը կազմակերպուած հայ զօրամասերի կողմից քանդուեցին 200-ից աւելի գրեղեր Երևանի նահանգում, և ուրիշ համանման փոստեր:

Երկու հարիւր հազարից աւելի ազգաբնակչութիւն ունեցող մի քաղաքում, պաշտպանների հետանալու և նոր իշխանութեան հաստատուելու ժամանակամիջոցին եթէ կեղել էր կն էրցաններ ու զոհեր, որ, բնականաբար, կարելի էր սպասել, ի նկատի ունենալով այն արածագրութիւնը, որ ստեղծուել էր մասնկողականների մարտի կոտորածից յետոյ, ինչպէս նաև ազգային յաջորդած անցնդհատ անարկիւթիւնից յետոյ մասնկողական ազգաբնակչութեան վերաբերմամբ, յամենայն ղեկու դրանց թիւն անհամատ աւելի պակաս է, քան ինչ որ դուք էր յեռում ձեր յայտարարութեան մէջ:

Նմանապէս չի համապատասխանում իրականութեան և ձեր այն



